

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2012թ. մայիսի 16-ին ՀՀ բնապահպանության նախարարությունում կայացած Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման միջգերատեսչական հանձնաժողովի նիստի

Սույն թվականի մայիսի 16-ին ՀՀ բնապահպանության նախարարությունում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման միջգերատեսչական հանձնաժողովի նիստ, որը վարում էր հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ բնապահպանության նախարար պարոն Ա. Հարությունյանը:

### Նիստին մասնակցում էին՝

- |                  |  |
|------------------|--|
| Ա. Հարությունյան | ՀՀ բնապահպանության նախարար<br>/հանձնաժողովի նախագահ/   |
| Ե. Տերտերյան     | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետ   |
| Կ. Սահակյան      | ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության աշխատակից  |
| Հ. Հովսեփյան     | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի տրանսպորտի վարչության տեխնիկական քաղաքականության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ                              |
| Ա. Պետիկյան      | ՀՀ առողջապահության նախարարության ՊՀՀ տեսչության շրջակա միջավայրի և կոմունալ հիգիենայի բաժնի պետ  |
| Հ. Միրզոյան      | ՀՀ էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության վարչության պետ  |
| Կ. Կարապետյան    | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության ԲՏՊ վարչության տեխնաժին վթարների, հակաքիմիական և հակաճառագայթային պաշտպանության բաժնի պետ |
| Տ. Ամիրյան       | ՀՀ ոստիկանության հասարակական կարգի ապահովման վարչության լիցենզավորման և թույլտվության բաժնի պետ  |
| Ն. Կնյազյան      | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն   |
| Ի. Հակոբյան      | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ /հանձնաժողովի քարտուղար/                    |

Նիստին հրավիրված էին՝

«Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ՍՊԸ ներկայացուցիչները

Հանձնաժողովի նիստը բացեց հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ բնապահպանության նախարար պարոն Ա. Հարությունյանը, հայտնելով, որ օրակարգում «Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ՍՊԸ կողմից ներկայացված մոլիբդեն պարունակող բանեցված կատալիզատորների վերամշակման գործունեության համար լիցենզիա ստանալու լրամշակված հայտի քննարկման հարցն է:

Տիկին Հակոբյանը ներկայացրեց, որ 2011 թվականի սեպտեմբերի 27-ին կայացած «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման» միջգերատեսչական հանձնաժողովի փորձաքննական եզրակացության առաջարկությունների հիման վրա «Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ՍՊԸ կողմից լրամշակվել է վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա ստանալու հայտի փաթեթը:

Կազմակերպության կողմից ներկայացվել են՝

- սանիտարապաշտպանիչ գոտու վերաբերյալ հիմնավորումը, որի համաձայն այն համապատասխանում է «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմերի» պահանջներին /ՄՆ 245-71/, հաշվի առնելով, որ 100-2000 տ/տարի գունավոր մետաղների արտադրության համար սանիտարապաշտպանիչ գոտին կազմում է 300 մ, «Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ՍՊԸ տեղակայված է Երևան քաղաքի հարավային արդյունաբերական գոտում և մոտակա բնակելի, ուսումնական կամ առողջապահական կառույցը գտնվում է 2 կմ հեռավորության վրա, իսկ ըստ արտանետումների ցրման հաշվարկի՝ մթնոլորտային օդում վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են նորմերի սահմաններում,

- «Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ՍՊԸ անվտանգության վկայագիրը, ինչը պայմանավորված է մոլիբդեն պարունակող թափոնների վերամշակման տեխնոլոգիական գործընթացում ամոնիակի օգտագործմամբ, որի նախագծային ընդհանուր քանակը կազմում է 15 տոննա,

- վերամշակման համար նախատեսվող թափոնների բնութագրերը և տեխնոլոգիական սխեման, որտեղ 5-րդ աղյուսակում բերված մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի տարեկան քանակի հաշվարկում կատարվել է ուղղում՝ դրանում ներառվել են նաև արտանետվող ձմեռային անհիդրիդի տարեկան քանակի տվյալները:

Նշված նյութերն ուսումնասիրման համար տրամադրվել են լիցենզավորման միջգերատեսչական հանձնաժողովի անդամներին:

Տիկին Պետիկյանը հայտնեց, որ «Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ձեռնարկության սանիտարապաշտպանիչ գոտու հետ կապված հիմնավորում՝ հիմք ընդունելով ՍԹԱ հաշվարկները և ՄՆ 254-71 «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմերը»: Սակայն ձեռնարկությունը տեղակայված է արդյունաբերական գոտում՝ «Հարավային արդյունաբերական շրջանում», որտեղ կան մի շարք այլ արդյունաբերական ձեռնարկություններ, ուստի անհրաժեշտ է ունենալ ամբողջ գոտու համար միացյալ

ՄԹԱ, որպեսզի պարզվի, թե արդյոք այս նոր ձեռնարկության արտանետումների ներդրումը արդեն իսկ գոյություն ունեցողներին չի ընդլայնի պահանջվող սանիտարապաշտպանիչ գոտին:

**Պարոն Ամիրյանը** մտահոգություն հայտնեց վերամշակման համար հումք հանդիսացող թափոնների՝ մոլիբդեն պարունակող բանեցված կատալիզատորների ներկրման հետ կապված, ինչպես նաև նշեց, որ նախորդ նիստում իր կողմից արված դիտողությունները՝ արտադրական հզորությունների տվյալների և մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի տարեկան քանակի հաշվարկում առկա անձշտությունների վերաբերյալ, հաշվի են առնվել:

**Պարոն Միրզոյանը** հայտնեց, որ մեկ տարուց ավել է ինչ ընկերությունը նորմալ ներդրումներ է իրականացրել և տնտեսության զարգացման առումով դեմ չէ կազմակերպությանը լիցենզիա տրամադրելուն:

**Պարոն Կարապետյանը** հայտնեց, որ իր Վարչության պետի հանձնարարությամբ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Երևան քաղաքի փրկարարական վարչության էրեբունու վարչական տարածքի փրկարարական բաժնի ներկայացուցչի հետ այցելել են կազմակերպություն, տեղում ծանոթացել են տեխնոլոգիայի հետ, ամոնիակի պահեստավորման պայմաններին և դրական տպավորություն ստացել, հայտնեց նաև, որ ՀՀ կառավարության «ՀՀ արդյունաբերական օբյեկտի անվտանգության վկայագրի կանոնադրությունը հաստատելու մասին» 11.11.98թ. թիվ 702 որոշման համաձայն մշակվել և հաստատվել է օբյեկտի անվտանգության վկայագիրը, որտեղ մանրամասն նկարագրված են ռիսկերը, սակայն խնդիր կա ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների հետ կապված, որոնք ձեռնարկությունը պարտավորվում է հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացնել և նշեց հաշվառման նպատակով ամոնիակի քանակի վերաբերյալ Հայաստանի փրկարար ծառայության տարածքային ստորաբաժանում տեղեկատվություն տրամադրելու անհրաժեշտության մասին:

**Պարոն Հովսեփյանին**, որպես ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության նոր ներկայացուցչի, հանձնարարվեց նյութերին ծանոթանալուց հետո գրավոր ներկայացնել կարծիք:

**Պարոն Սահակյանը** ասաց, որ կազմակերպությանը լիցենզիա տրամադրելու առնչությամբ առարկություններ չունի:

**Պարոն Կնյազյանը** հայտնեց, որ նույնպես կողմ է կազմակերպությանը լիցենզիա տրամադրելուն և խնդիր չի տեսնում բանեցված կատալիզատորների ներկրման հետ կապված, քանի որ քիմիական նյութերի մոտ 80%-ը դրսից է ներկրվում հանրապետություն, առավել ևս որ կատալիզատորը այնքան էլ վտանգավոր չէ, քանի որ այն միայն մակերեսորեն է կլանում նյութերը և դրանց կոնցենտրացիան ցածր է:

**«Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ՍՊԸ ներկայացուցիչների** կողմից հնչեց կարծիք, որ մոլիբդենի խտանյութը ավելի վտանգավոր է, քան կատալիզատորը, որի վերամշակումից ծծումբ չի արտանետվում, ինչն առկա է մոլիբդենի խտանյութի դեպքում: Նշեցին նաև տեխնոլոգիայի անվտանգության մասին, քանի որ այն փակ ցիկլով է և թունավոր նյութեր չեն օգտագործվում:

**Պարոն Տերտերյանը** նշեց, որ բանեցված կատալիզատորները, որպես վտանգավոր թափոններ, կարգավորվում են «Վտանգավոր թափոնների

անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիայով և ներմուծումը պետք է պատշաճ հիմնավորում ունենա, ինչպես նաև հայտնեց, որ դրանց վերամշակումից առաջացած թափոնները պետք է անձնագրավորվեն:

Տիկին Հակոբյանը նույնպես հայտնեց, որ այդ թափոնները ներառված են «Հայաստանի Հանրապետության վտանգավոր թափոնների ցանկում», որոնց ներմուծումն ու արտահանումը ենթակա է նախնական հայտավորման: Բացի այդ, Բազելի կոնվենցիայի հիմնադրույթների համաձայն յուրաքանչյուր կողմ երկիր ինքը պետք է վերամշակի կամ հեռացնի իր թափոնները: Միայն համապատասխան տեխնիկական հզորությունների բացակայության դեպքում այդ թափոնները կարող են արտահանվել վերամշակելու հնարավորություն ունեցող այլ երկիր:

Պարոն Հարությունյանը հայտնեց, որ, անհանգստություն կա թափոնների ներկրման, ինչպես նաև արդյունաբերական գոտու արտանետումների զումարային քանակի հետ կապված, ինչը պարզելու համար հանձնարարվեց պարոն Տերտերյանին կատարել համապատասխան հաշվարկ: Սահմանված նորմերը գերազանցելու դեպքում ընկերության ներկայացուցիչները կրկին կիրավիրվեն քննարկման և ամփոփելով՝ նշեց, որ ընդհանուր առմամբ հնչած կարծիքները դրական են և արժե, որ ծրագիրը կյանքի կոչվի:

Ա. Հարությունյան

Ե. Տերտերյան

Կ. Սահակյան

Հ. Հովսեփյան

Ա. Պետիկյան

Հ. Միրզոյան

Կ. Կարապետյան

Տ. Ամիրյան

Ն. Կնյազյան

Ի. Հակոբյան